

Որակի
հոշակագիր

**Այլ ֆինանսական միջնորդ և ֆինանսական միջնորդության
օժանդակ գործունեության կազմակերպությունների
ֆինանսական ակտիվներ, պարտավորություններ, շահույթ կամ
վնաս**

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Այլ ֆինանսական միջնորդ և ֆինանսական միջնորդության օժանդակ գործունեության կազմակերպությունների ֆինանսական ակտիվներ, պարտավորություններ, շահույթ կամ վնաս
0.2	Ոլորտը	Կազմակերպությունների ֆինանսներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Ֆինանսների վիճակագրության բաժին Բաժնի պետ Հայկուշ Տիտիգյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 583 049, Էլ. փոստ՝ haykush@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Միասնական և համակարգված ձևով օգտագործողներին տրամադրել վիճակագրական տեղեկատվություն այլ ֆինանսական միջնորդ և ֆինանսական միջնորդության օժանդակ գործունեության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Այս հատվածի վիճակագրությունը վարվում է 20-րդ դարի 90-ական թվականների սկզբից:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Ցուցանիշները թույլ են տալիս վերլուծել և գնահատել ֆինանսական հատվածի այլ ֆինանսական միջնորդությամբ զբաղվող կազմակերպությունների, օժանդակ ֆինանսական կազմակերպությունների, ապահովագրական

		ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների գործունեությունը, մշակել ֆինանսական հատվածի քաղաքականությունը, գնահատել երկրի ֆինանսական կայունությունը:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Տեղեկատվության աղբյուր է հանդիսանում որպես վարչական (տեղեկատվական) ռեզիստր հանդիսացող ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից Արմատատ տրամադրվող տեղեկանքները: Այլ ֆինանսական միջնորդ և ֆինանսական միջնորդության օժանդակ գործունեության կազմակերպությունների վիճակագրությունը ՀՀ ԿԲ կողմից կազմվում է ԿԲ-ին հաշվետու սուբյեկտներից ստացված հաշվետվությունների հիման վրա որոնց հիման վրա կազմվում և Արմատատին է տրամադրվում համապատասխան ամփոփ տեղեկատվությունը:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	«Ֆինանսական կազմակերպություններ» հատվածը ներառում է ֆինանսական միջնորդությամբ զբաղվող և / կամ օժանդակ ֆինանսական գործունեություն իրականացնող բոլոր կազմակերպությունները և քվազիկազմակերպությունները: Ֆինանսական միջնորդության դեպքում ինստիտուցիոնալ միավորը ձեռք է բերում ֆինանսական ակտիվներ և, իրականացնելով շուկայում ֆինանսական գործառնություններ, միևնույն ժամանակ իր անունից

		<p>ընդունում է պարտավորություններ:</p> <p>«Այլ ֆինանսական միջնորդներ, բացառությամբ ապահովագրական կազմակերպությունները և կենսաթոշակային հիմնադրամները» ենթահատվածը ներառում է հիմնականում ֆինանսական միջնորդությամբ զբաղվող և երկարաժամկետ ֆինանսավորում իրականացնող կազմակերպությունները և քվազիկազմակերպությունները:</p> <p>Այս ենթահատվածը ներառում է հետևյալ կազմակերպությունները և քվազիկազմակերպությունները, պայմանով, որ դրանք չեն հանդիսանում ավանդային կազմակերպություններ՝</p> <ul style="list-style-type: none">-ֆինանսական լիզինգ տրամադրող կազմակերպություններ,-գնման օպցիոնով ապրանքների վարձույթով զբաղվող կազմակերպություններ՝ անհատական կամ առևտրային ռեսուրսների տրամադրմամբ,-ֆակտորինգով զբաղվող կազմակերպություններ,-արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների դիլերներ՝ սեփական պատասխանատվությամբ,-մասնագիտացված ֆինանսական կազմակերպություններ՝ ռիսկային կապիտալի և զարգացման կապիտալի ընկերություններ, արտահանում և ներմուծում ֆինանսավորող ընկերություններ,-արժեթղթերով ապահովված ակտիվների պահոց ունենալու նպատակով ստեղծված գլխավոր արտարժույթի ֆինանսական կազմակերպություններ,-միայն դրամավարկային ֆինանսական կազմակերպություններից ավանդներ և/կամ ավանդների համանման փոխարինիչներ ստացող ֆինանսական միջնորդներ,-հոլդինգային կազմակերպություններ, որոնք միայն հսկում և կառավարում են ֆինանսական միջնորդություն և/կամ օժանդակ ֆինանսական գործունեություն իրականացնող
--	--	---

խումբ դուստր կազմակերպությունները:
Օժանդակ ֆինանսական գործունեությունը սերտորեն կապված է ֆինանսական միջնորդության հետ, թեև այն ֆինանսական միջնորդություն չի համարվում:

Օժանդակ ֆինանսական գործունեությունը ներառում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ գործառնությունների իրացման կամ ֆինանսական միջոցների փոխակերպման (վերագրանցման) օժանդակ ֆինանսական գործունեությունը: Ակտիվների ձեռք բերման կամ պարտավորությունների ընդունման հետ կապված օժանդակ ֆինանսական կազմակերպությունները չեն ենթարկվում ռիսկի և միայն օժանդակում են ֆինանսական միջնորդությանը:

Այս ենթահատվածը ներառում է՝

-ապահովագրական բրոքերներ, դիսպաշերներ, ապահովագրական և կենսաթոշակային խորհրդատուներ և այլ,

-վարկերի, արժեթղթերի գծով բրոքերներ, ներդրումների գծով խորհրդականներ և այլ, արժեթղթերի թողարկումը կառավարող կազմակերպություններ,

-ինդոսամենտի, մուրհակների և համանման ֆինանսական գործիքների միջոցով երաշխավոր կազմակերպություններ,

-հեջավորման համար ֆինանսական գործիքների և ֆինանսական գործիքների ածանցյալների՝ սվոպների, օպցիոնների, ֆյուչերսների (առանց դրանց թողարկման) կազմակերպմամբ զբաղվող կազմակերպություններ,

-ֆինանսական շուկաների ենթակառուցվածքն ապահովող կազմակերպություններ,

-ֆինանսական միջնորդների և ֆինանսական շուկաների գործունեության հսկողություն իրականացնող կենտրոնական մարմիններ, երբ դրանք հանդիսանում են ինքնուրույն ինստիտուցիոնալ միավորներ

		<p>-կենսաթոշակային հիմնադրամները, բաց տեսակի ներդրումային հիմնադրամները և այլն,</p> <p>-ֆոնդային բորսաները և ապահովագրական բորսաները ապահովող կազմակերպություններ,</p> <p>-անկախ իրավաբանական անձ համարվող ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք միայն սպասարկում են ֆինանսական կազմակերպությունները, սակայն չեն զբաղվում ֆինանսական միջնորդությամբ կամ օժանդակ ֆինանսական գործունեությամբ:</p> <p>«Ապահովագրական կազմակերպություններ և կենսաթոշակային հիմնադրամներ» ենթահատվածը ներառում է հիմնականում ֆինանսական միջնորդությամբ՝ ռիսկերի ապահովման համար ֆինանսական միջոցների կենտրոնացմամբ զբաղվող կազմակերպությունները և քվազիկազմակերպությունները: Ապահովագրական պայմանագրերը կարող են կնքվել առանձին անձանց կամ մի խումբ անձանց հետ, անկախ այն հանգամանքից, դրանց մասնակցությունը հանդիսանում է կառավարման կենտրոնական մարմինների կողմից դրված ընդհանուր պարտավորությունների արդյունք, թե ոչ: Ի դեպ, իրականացվող պայմանագրերից գերակշռող մասը կազմում են սոցիալական ապահովագրության պայմանագրերը:</p> <p>Այս ենթահատվածը ներառում է և՛ դուստր ապահովագրական կազմակերպությունները, և՛ վերաապահովագրությամբ զբաղվող հիմնական (առաջնային) ապահովագրական կազմակերպությունները, որոնք այլ կազմակերպությունների միջև բաշխելով ապահովագրական ռիսկերը, նվազեցնում են սեփական ռիսկերը:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Հիմնական հասկացություններ</p> <p>Ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար նախատեսվող այն գումարը, որն ապահովադիրն ապահովագրության պայմանագրի կամ պարտադիր ապահովագրության դեպքում օրենսդրությանը</p>

համապատասխան պարտավոր է մուծել ապահովագրողին:
Ապահովագրական հատուցումն այն գումարն է, որն ապահովագրողները վճարում են ապահովադրին կամ շահառուներին ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած փաստացի վնասի կամ կորուստների դիմաց:

Ապահովագրական պահուստները կյանքի և ոչ կյանքի ապահովագրական պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով ապահովագրավճարներից ձևավորված միջոցներն են:

Բաժնետոմսը բաժնետիրական ընկերության կողմից թողարկվող արժեթուղթ է, որը վկայում է ներդրողի կողմից այդ ընկերության սեփականության որևէ մասի սեփականատերը լինելու և, որպես կանոն, եկամտի որոշակի մասնաբաժին ստանալու իրավունքի մասին, որը նախատեսվում է արժեթղթեր թողարկողի ազդագրում:

Ներդրումային ընկերությունների հիմնական ցուցանիշները ներկայացնում են ընկերությունների ընդհանուր ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և կուտակված շահույթի փոփոխությունը:

«Վճարահաշվարկային համակարգ» բաժնում արտացոլված են տվյալներ վճարահաշվարկային համակարգերի և դրանց մասնակիցների, վճարային գործիքների և կատարված գործառնությունների վերաբերյալ:

Աշխարհագրական ընդգրկունություն

Ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունը:

Հրապարակման խմբավորումներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի տրամադրած տվյալների, ներկայացվում է տեղեկատվություն հետևյալ կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ.

		<ul style="list-style-type: none"> • ապահովագրական ընկերությունների, • ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, • ֆոնդային բորսայի, • գրավատների, • վճարահաշվարկային կազմակերպությունների, • արժույթային դիլերների և • փոխանակման կետերի:
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Եռամսյակային
2.2	Հրապարակման ամսաթիվը	<p>Ապահովագրական ընկերությունների և ֆոնդային բորսայի տվյալները հրապարակվում են հաշվետու եռամսյակին հաջորդող 60/61-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները՝ հաջորդող տարվա մայիսի 31-ին:</p> <p>Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների, արժույթային դիլերների և փոխանակման կետերի տարեկան ցուցանիշները հրապարակվում են հաջորդող տարվա մայիսի 31-ին:</p>
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Եռամսյակային
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:
3.2	Անճշտության աղբյուրները	Ֆինանսական հատվածի բոլոր կազմակերպություններն ընդգրկված են Արմստատի համար վարչական ռեգիստր հանդիսացող ՀՀ ԿԲ հաշվառման դաշտում:
3.3	Ճշգրտության չափումները/	Անճշտության աղբյուրներ, այդ թվում՝ թերհաշվառման, առկա չեն:

	չափելիությունը	
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Վիճակագրությունը վարվում է Արժույթի միջազգային հիմնադրամի «Դրամավարկային և ֆինանսների վիճակագրություն» ձեռնարկի մեթոդաբանությամբ, որի հիմնական հասկացությունները համաձայնեցված են «Ազգային հաշիվների համակարգ 1993» ձեռնարկի հասկացություններին:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա չէ :
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Տվյալները ճշգրտվում են տարեկան հրապարակումներում: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	Հրապարակումներ Եռամսյակային հրապարակումներ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի (հայերեն և ռուսերեն) յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա հրապարակումներում: Տարեկան հրապարակումներ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» վիճակագրական տեղեկագիր (հայերեն, անգլերեն): Տվյալների բազա http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6 Ինտերնետային հասցե Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82 :
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու	ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկանքները պահպանվում են ինչպես թղթային, այնպես

	կիրառելիությունը	Էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Այլ տեղեկատվություն	Տեղեկատվական ամսական զեկույցում հրապարակվում են եռամսյակային տվյալներ ընթացիկ ժամանակաշրջանի և նախորդ ժամանակաշրջանի համար: Մեթոդաբանական պարզաբանումներ առկա են նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում, ինչպես նաև համապատասխան թեմատիկ հրապարակումներում:
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373 :